ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Ռուսաց լեզվի ուսուցիչ
Դերը	• Աշակերտների ուսուցման և դաստիարակության կազմակերպումն է դասավանվող առարկայի առանձնահատկությունները հաշվի առնելով; • զարգացնում է աշակերտի բանավոր և գրավոր խոսքը, տրամաբանությունը, ինքնուրույն դատողությունը • Աշակերտների քաղաքացիականացման իրականացումը, նրա անձի ընդհանուր կուլտուրայի ձևավորումը; • Կիրառել ուսուցման զանազան մեթոդներ, տեխնոլոգիաներ, միջոցներ և հնարքներ; • Ապահովել աշակերտների կրթության պատշաճ մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան; • Պահպանել աշակերտների իրավունքներն ու ազատությունը՝ ՀՀ “Կրթության օրենքին” համապատասխան; • Անընդհատ կատարելագործել մասնագիտական գիտելիքները, մասնակցել մեթոդմիավորումների աշխատանքներին; • Իրականացնել աշակերտների ծնողների հետ կապեր՝ նրանց դաստիարակության , ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով; • Կրթական գործընթացում ապահովել երեխայի կյանքն ու առողջությունը:
Խնդիրների բնագավառ 1.	Ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպում
Աշխատանքային գործընթացը	• Իրականացնում է առարկայի ուսուցման գործընթացը կրթական ծրագրերին համապատասխան; • Պլանավորում է և անցկացնում ուսումնական պարապմունքները՝ համապատասխան թեմաների, ծրագրի բաժինների և ուսումնական պլանների ; • Կիրառում է գիտականորեն հիմնավորված ժամանակակից ուսուցման մեթոդները, հնարները և միջոցները, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները; • Կիրառում է ուսուցման արդյունքների գնահատման ժամանակակից միջոցները և ձևերը; • Աշակերտների դաստիարակությունը՝ հոգևոր, բարոյական արժեքների և քաղաքացիական համոզմուքների տեսանկյունից; • Աշակերտների կրթության և զարգացման իրականացումը անձնի կողնորոշման մոտեցմամբ՝ ուսման նկատմամբ դրդապատճների ստեղծման նպատակով; • Ուսուցման և զարգացման աշխատանքների կազմակերպումը՝ շեղումների շտկման նկատմամբ:
Կատարման չափանիշները	• Իրականացված է առարկայի ուսուցման գործընթացը կրթական ծրագրերին համապատասխան; • Պլանավորված և անցկացված են ուսումնական պարապմունքները՝ համապատասխան թեմաների, ծրագրի բաժինների և ուսումնական պլանների ;

	• Կիրառում է գիտականորեն հիմնավորված ժամանակակից ուսուցման մեթոդները, հնարները և միջոցները, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները; • Կիրառում է ուսուցման արդյունքների գնահատման ժամանակակից միջոցները և ձևերը; • Իրականացված է աշակերտների դաստիարակությունը՝ հոգևոր, բարոյական արժեքների և քաղաքացիական համոզմունքների տեսանկյունից; • Աշակերտների կրթությունընև զարգացումն իրականացված են անձնի կողնորոշման մոտեցմամբ՝ ուսման նկատմամբ դրդապատճների ստեղծման նպատակով; • Ուսուցման և զարգացման աշխատանքները կազմակերպված են՝ շեղումների շտկման նկատմամբ:
Խնդիրների բնագավառ 2.	**Նախապատրաստում դասին**
Աշխատանքային գործընթացը	• դասընթացը սկսելուց առաջ ուսուցիչը կազմում է օրվա պլան՝ համապատասխան թեմատիկ պլանին • մշակում և համախմբում է տվյալ դասին անհրաժեշտ ուսումնական և դիդակտիկ նյութեր, օժանդակ պարագաներ (լեզվական քարտեր, գրատախտակի կամ ֆլիպ չարթի օգտագործման ժամանակը և անհրաժեշտությունը) • անհրաժեշտության դեպքում օգտվում է լրացուցիչ գրականությունից, մեթոդական ձեռնարկներից և ուղեցույցներից • Ելնելով գնահատման մեթոդաբանության պահանջներից կազմում է տվյալ դասի ընթացքում աշակերտների գիտելիքների ստուգման կարճ կամ ընդարձակ գրավոր աշխատանքների նյութը:
Կատարման չափանիշները	• ունի օրվա դասի պլան յուրաքանչյուր դասի համար, որը համապատասխան է թեմատիկ պլանին • առկա են դասընթացի դիդակտիկ նյութերը և օժանդակ պարագաները (լեզվական քարտեր, գրատախտակի կամ ֆլիպ - չարթի օգտագործման ժամանակը և անհրաժեշտությունը) • թեմայի դասավանդման համար ճիշտ է ընտրել լրացուցիչ գրականությունը, մեթոդական ձեռնարկը, ուղեցույցները • գրավոր աշխատանքի նյութը համապատասխանում է գնահատման մեթոդաբանության պահանջներին:
Խնդիրների բնագավառ 3	**Դասարանային ուսուցում**
Աշխատանքային գործընթացը	• կատարում է կազմակերպական աշխատանքներ (սովորողների ներկայության հաշվառում, տնային աշխատանքի կատարման ստուգում). • կազմակերպում և ղեկավարում է մատուցված (ուսուցանված) նյութի ամրապնդմանն ուղղված միջոցառումներ (քննարկումներ, դերախաղեր, խմբային աշխատանք և այլն), վերլուծում և ամփոփում է դրանք՝ զարգացնելով ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու ունակություններ • սովորողներին հաղորդում է նոր նյութը, եթե նախատեսված է դասի պլանով • սովորողներին առաջադրում է վարժություններ՝ նոր նյութի

	հաղորդմանը նրանց նախապատրաստելու համար և կատարում է ամփոփում (ռեֆլեքսիա). • հարցում • գրավոր կամ բանավոր ձևով գնահատում է սովորողներին. • ապահովում է կարգապահությունը, . • հանձնարարում է տնային աշխատանք • ձևավորում է քաղաքացու և հայրենասերի բարոյական հատկանիշներ
Կատարման չափանիշները	• սովորողների ներկայությունը և տնային աշխատանքի կատարումը հաշվառված է և արձանագրված է՝ ըստ սահմանված կարգի. • իր կողմից ընտրված մեթոդով պարզել է հին նյութի ընկալման աստիճանը • նոր նյութը մատուցված է, եթե նման աշխատանք նախատեսված է դասի պլանով • դասի ընթացքում հաղորդված նյութը համապատասխանում է ուսումնական ծրագրին և աշակերտների կարողություններին • նոր նյութի ընկալման աստիճանը պարզաբանված է հարցերի միջոցով, կամ ուսուցչի կողմից ընտրված այլ մեթոդով • դասի ընթացքում աշակերտները գնահատվել են • դասարանում ապահովված է կարգապահությունը (ապահովել է սովորողների ակտիվ մասնակցությունը դասին) • տնային աշխատանք հանձնարարված է • դասի ընթացքում ներկայացված է քաղաքացու և հայրենասերի բարոյական հատկանիշների էլեմենտներ
Խնդիրների բնագավառ 4	**Գնահատում**
Աշխատանքային գործընթացը	• Կազմում է գնահատման միջոցներ (թեստեր, հարցաշարեր, հարցաթերթիկներ, տեքստեր, առաջադրանքներ, քննական տոմսեր և այլն). • Ստուգում և գնահատում է սովորողների դասարանային և տնային գրավոր աշխատանքներն ու առաջադրանքները. • Կատարում է հին դասի ամփոփում և գնահատում է աշակերտների կողմից նյութի յուրացման համապատասխանությունը և գիտելիքների զարգացման ընթացքը առարկայական պետական չափորոշիչներին, • կատարում է բանավոր գնահատում • մասնակցում է փոխադրական և ավարտական քննություններին, կատարում սովորողների գիտելիքների գնահատում
Կատարման չափանիշները	• գրավոր և թեստային աշխատանքները կազմված են՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների։ • տնային և գրավոր առաջադրանքները ու թեստային աշխատանքները ստուգված և գնահատված են ըստ գնահատման չափանիշների • հին դասի յուրացման աստիճանը և գիտելիքների զարգացման ընթացքը գնահատված է • դասի ընթացքում գնահատվել են բավարար թվով աշակերտներ և գնահատումը կատարվել է գնահատման մեթոդաբանության

	սկզբունքներով • կատարված է սովորողների գիտելիքների գնահատում փոխադրական և ավարտական գրավոր և բանավոր քննությունների ժամանակ
Խնդիրների բնագավառ 5.	**Աշխատանք փաստաթղթերի հետ**
Աշխատանքային գործընթացը	• կազմում է թեմատիկ պլան • կազմում է օրվա դասի պլանը • գրանցում է կատարում դասամատյանում՝ ըստ թեմատիկ պլանի • կազմում է ամփոփաթերթ, • կազմում է անձնական գործեր (դասղեկ) • գրում է աշակերտի բնութագիրը • դպրոցի տնօրինության պահանջով կազմում է քննական արձանագրություն, զեկուցագիր, բնութագիր • ստեղծում և վարում է աշակերտների անհատական թղթապանակ
Կատարման չափանիշները	• թեմատիկ պլանը համապատասխանում է ուսումնական պլանին և առարկայական ծրագրի պահանջներին, հաստատված է առարկայական մեթոդմիավորման կողմից. - Ճիշտ է սահմանված թեմաների հաջորդականությունը - Ճիշտ են բաշխված ժամերն՝ ըստ թեմաների - Ճիշտ է լրացված օրացուցային թեմատիկ պլանի ձևաչափը • կազմված է յուրաքանչյուր օրվա դասի պլանը • մատյանի գրանցումները կատարված են՝ ըստ կարգի և համապատասխանում են թեմատիկ պլանին • ամփոփաթերթում ներկայացված աշակերտների առաջադիմության տվյալները համապատասխանում են մատյանում առկա տվյալներին • օբյեկտիվորեն է ներկայացված աշակերտի բնութագիրը • քննական արձանագրությունները կազմված են սահմանված կարգով • յուրաքանչյուր աշակերտի համար առկա է անհատական թղթապանակ
Խնդիրների բնագավառ 6.	**Մեթոդական աշխատանք**
Աշխատանքային գործընթացը	• Կազմում է մեթոդական աշխատանքի պլանը (մեթոդմիավորման նախագահ) • Նշում է կատարման ժամկետները[մմ նախագահ] • մասնակցում է աշխատանքի պլանի քննարկմանը և հաստատմանը • Կազմակերպում է մեթոդական թեմատիկ ընթերցումներ[մմ նախագահ] • մասնակցում է մեթոդական թեմատիկ ընթերցումներին • Կազմակերպում և անցկացնում է մեթոդական միավորման նիստեր[մմ նախագահ] • մասնակցում է մեթոդական միավորման նիստերին • Քննարկում է կրթության հետ առնչվող ընթացիկ հարցեր [մմ նախագահ] • մասնակցում է կրթության կազմակերպման հետ առնչվող ընթացիկ հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը

	• զբաղվում է ինքնակրթությամբ
Կատարման չափանիշները	• գործողությունները կատարված են՝ ըստ պլանի և արձանագրված են • տեղեկատվության աղբյուրները ճիշտ են ընտրված • առկա են ինքնավարժանքի արդյունքները
Խնդիրների բնագավառ 7.	**Ինքնակրթություն**
Աշխատանքային գործընթացը	• Տեղեկատվության աղբյուրի ընտրություն • Ընթերցում, ընկալում, վերլուծություն • Մշակումների կատարում • Ինքնավարժանք
Կատարման չափանիշները	• Տեղեկատվության աղբյուրը ճիշտ է ընտրված • Ճիշտ են կատարված մշակումները • Առկա են ինքնավարժանքի արդյունքները
Խնդիրների բնագավառ 8.	**Աշխատանք ծնողների հետ**
Աշխատանքային գործընթացը	• Իրականացնում է առարկայի ուսուցման գործընթացը կրթական ծրագրերին համապատասխան; • Պլանավորում և անցկացնում է ուսումնական պարապմունքները՝ համապատասխան թեմաների, ծրագրի բաժինների և ուսումնական պլանների; • Կիրառում է գիտականորեն հիմնավորված ժամանակակից ուսուցման մեթոդները, հնարները և միջոցները, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները; • Կիրառում է ուսուցման արդյունքների գնահատման ժամանակակից միջոցները և ձևերը; • Աշակերտների դաստիարակությունը՝ հոգևոր, բարոյական արժեքների և քաղաքացիական համոզմունքների տեսանկյունից; • Աշակերտների կրթության և զարգացման իրականացումը անձնային-կողնորոշման մոտեցմամբ՝ ուսման նկատմամբ դրդապատճների ստեղծման նպատակով; • Ուսուցման և զարգացման աշխատանքների կազմակերպումը՝ շեղումների շտկման հաշվառմամբ:
Կատարման չափանիշները	• ծնողների հետ հաստատված է կապ ծնողական ժողովների, անհատական հանդիպումների և այլ հաղորդակցության միջոցներով (հեռախոս, էլեկտրոնային այլ միջոցներ) • արձանագրված են սովորողների սոցիալական կարգավիճակի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները • ծնողները պարբերաբար [ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ] իրազեկված են սովորողների առաջադիմության ցուցանիշների, հաճախումների, ուսումնառության արդյունավետության և վարքի մասին • առկա է սովորողի վարքի փոփոխման գործողությունը • էքսկուրսիաները կազմակերպված են՝ ըստ պլանի
Խնդիրների բնագավառ 9.	**Գեղագիտական և էկոլոգիական դաստիարակություն**
Աշխատանքային գործընթացը	Գեղագիտական և էկոլոգիական դաստարակության ձևավորում:

Կատարման չափանիշները	• Ուսումնական ճամփորդության կազմակերպում; • Ցուցահանդեսների կազմակերպում; • Միջոցառումների կազմակերպում; • Ծառատունկի և կենդանիների խնամքի կազմակերպում;
Խնդիրների բնագավառ 10.	**Գիտամեթոդական գործունեության բնագավառ**
Աշխատանքային գործընթացը	Հետազոտական աշխատանքի կազմակերպում
Կատարման չափանիշները	• Գիտամեթոդական աշխատանքի իրականացում, մասնակցություն գիտամեթոդական միավորումների աշխատանքներին; • Ինքնագնահատում և ինքնավերլուծություն՝ մանկավարժական որակավորումը բարձրացնելու նպատակով։ • Մանկավարժական ծրագրերի մշակում • Ուսուցման և դաստիարակության արդյունքների վերահսկողության կազմակերպում;
Խնդիրների բնագավառ 11.	**Կազմակերպչական-կառավարող գործունեության բնագավառ**
Աշխատանքային գործընթացը	Մասնակցություն դպրոցի կառավարմանը
Կատարման չափանիշները	• Դպրոցական և դասարանական փաստաթղթերի վարում; • դասվարի ֆունկցիաների կատարում; • Մասնակցություն դպրոցական կոլեկտիվի ինքկառավարման և կառավարման գործընթացներին։
Պատասխանատվությունը	Ռուսաց լեզվի ուսուցիչը պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի ապահովման, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, երեխայի քաղաքանացման մակարդակի, կրթության շարունակականության ապահովման համար։
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	• Հայերեն- գերազանց, • Ռուսերեն - գերազանց • անգլերենին - տիրապետի բավարար մակարդակով՝ մասնագիտական գրականությունից և այլ տեղեկատվական միջոցներից օգտվելու նպատակով։
Համակարգիչ	• MS Word – լավ • Internet Explorer– լավ • Power Point - գերազանց– լավ • Excel-բավարար– լավ
Գիտելիքները	Իմանա. • կրթության ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրություն • երեխաների իրավունքներին վերաբերող օրենսդրություն • իմաստասիրության և տրամաբանության հիմունքներ • տնտեսագիտության հիմունքներ • քաղաքագիտության հիմունքներ • իրավունքի հիմունքներ • ազգագրության հիմունքներ

	• բարոյագիտության և գեղագիտության հիմունքներ • մշակութաբանության հիմունքներ • մանկավարժություն և հոգեբանություն • մարդու անատոմիա, տարիքային ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով • լեզվաբանության հիմունքներ • էկոլոգիական դաստիարակության հիմունքներ
Կարողությունները և հմտություններ	Կարողանա. • պաշտպանել իր իրավունքները աշխատանքային օրենսդրության համաձայն • կատարել փաստաթղթավարություն • դրսևորել քննադատական մտածոցողություն • գործող պահանջներին համապատասխան՝ ուսումնական , առարկայական ծրագրեր մշակել, փոփոխել կատարելագործել • ուսուցման տարբեր մեթոդներ, ձևեր, եղանակներ կիրառել, անհատական պարապմունք, ինքնուրույն աշխատանք կազմակերպել և հսկել • առարկայի յուրացման մակարդակը ստուգելու համար ստուգարքներ և քննություններ անցկացնել, գնահատել • պլանավորել առարկայական ուսումնական նյութը, ապահովելով ուսումնական ծրագրի պահանջները; • Կարողանա մասնակցել մեթոդական աշխատանքներին; • Կիրառել առավել արդյունավետ ուսուցման և դաստիարակության ձևերը, մեթոդները, ձևերը; • Ապահովել ուսումնական կարգապահությունը; • Խթանել իմացական գործունեությունը և ուսուցման դրդապատճառները; • Հասնել աշակերտների կողմից խոր և ամուր գիտելքիների յուրացմանը,կիրառմանը պրակտիկ գործունեության ընթացքում; • Անցկացնել լրացուցիչ նախասիրական պարապմունքներ; • Ուսումնասիրել և հաշվի առնել աշակերտների անհատական առանձնահատկությունները; • Մասնակցել ռուսումնական գործընթացի կազմակերպմանը և մեթոդական աշխատանքներին, կրթական հաստատությանը վերաբերող որոշումների կայացմանը, • աշակերտների ծնողների կամ նրանց փոխարինող անձանց հետ կապեր պահպանել, ուսուցման վերաբերյալ խորհրդատվություն մատուցել, • սսովորողների արտադպրոցական գործունեությունը կազմակերպելը, մասնավորապես՝ գրական-գեղարվեստական և այլ բնույթի ակումբների աշխատանքներին աջակցել, • մանկավարժական գործունեությանն առնչվող հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմել, • այլ աշխատողների ղեկավարել։ • ասաշխատանքի անվտանգության պայմաններ ապահովել, • մեծահասակների ուսուցման ծրագրեր իրագործել

Վերաբերմունքը	Դասավանդողի հոգածության կենտրոնում երեխայի անձն է /անձնակողմնորոշիչ ուսուցում և դաստիարակություն/: Ուսուցիչը պարտավոր է հասկանալ, հաշվի նստել /հարգել/ և ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին որ նա կա՝ հումանիստական մանկավարժության պահանջներին համապատասխան:

«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑԻՉ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

«Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1.Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է բանավոր հարցման, գրավոր ստուգումների, ռուբրիկների, թղթապանակների, համալիր թեսթային հարցման կամ ներկայացումների (պրեզենտացիաների) միջոցով: Ստուգման համար կիրառվող բոլոր ձևերը բաղկացած են վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել ստուգման մեջ առաջադրված հարցերի և առաջադրանքների առնվազն 95% - ին:

2.Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է առաջադրված կոնկրետ խնդիր, որը տևական գործունեություն է պահանջում, գնահատման չափանիշները սահմանվում են ըստ տվյալ մոդուլի կոնկրետ արդյունքին համապատասխան սահմանված չափանիշների: Դրանք իրենց մեջ կարող են ներառել.

- տրված առաջադրանքի ընկալման մեկնաբանություն
- նախագծի մշակում
- աշխատանքի պլանավորում
- գործնական աշխատանք/ համապատասխան քայլերով
- կատարված աշխատանքի ներկայացում
- աշխատանքի վերլուծություն և ինքնագնահատում

Արդյունքը համարվում է բավարար, եթե վեորոնշյալ գործողությունների առնվազն 90% - ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը: